# Արձանագրություն N3

## <ԱԲԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-17/1> ծածկագրով շրջանակային համաձայնագրերով <Դեղորայքի և պատվաստանյութերի > գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Արտաշատ

23.01.2017թ.
ժ. 11.00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ՝ Մ.Հովակիմյան
անդամ՝ Լ.Ավետիսյան
Ռ.Բենյամինյան
քարտուղար՝ Գ. Ղազարյան

### 1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

---------------------------------------------------------------------------------------------

**(Մ.Հովակիմյան)**

Գնային առաջարկների հայտերը բացվել են <Արտաշատի ԲԿ>ՓԲԸ-ի վարչական մասնաշենքում՝ ք.Արտաշատ, Ա.Խաչատրյան 116 հասցեում, ծանուցման օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

### 2. <u>Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեները, տվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին</u>

**(Մ.Հովակիմյան)**

**2.1**. Համաձայն սահմանված կարգի ծանուցվել են շրջանակային համաձայնագրեր կնքած և տվյալ պահին որպես հնարավոր մասնակից գրանցված բոլոր կազմակերպություններին:

2.2 Գնային առաջարկ պարունակող ծրար կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները

| հ/հ | Մասնակցիանվանումը | Հասցեն, հեռախոսիհամարը |
|---|---|---|
| 1 | <Արֆարմացիա>ՓԲԸ | ք.Երևան, Մյասնիկյան 1/6, հեռ 060-75-99-99 |
| 2 | <Նատալի-Ֆարմ>ՍՊԸ | Ք.Երևան, Տիչինայի 3-րդ նրբ, 2/2 հեռ 010-744212 |
| 3 | <Կոտայք>ՍՊԸ | Ք.Աբովյան, Հատիսի փ 10ա հեռ-0222-21775 |
| 4 | <Լիկվոր>ՓԲԸ | Ք.Երևան, Քոչինյան 7/9հեռ 060-378806 |
| 5 | <Եվրոֆարմ>ՍՊԸ | Ք.Երևան, Ամիրյան 18, 1ա, հեռ-010-530577 |
| 6 | <Մագտոնի>ՍՊԸ | Ք.Երևան, Արցախի 20 հեռ-010-23 26 69 |
| 7 | <Ֆարմասերվիս>ՍՊԸ | Ք.Երևան, Կայան 10. Հեռ-010-268171 |
| 8 | <Մեդիքալ Հորիզոն>ՍՊԸ | Ք.Մասիս, Մասիս-կայարան, Գործարանային 22,հեռ-098-889193 |
| 9 | <Ռիխտեր-Լամբրոն>ՀՁ | Ք.Երևան, Ղ.Փարպեցու 22/14,հեռ 010-544406 |
| 10 | <ԼեյկոԱլեքս>ՍՊԸ | Ք.Արմավիր, Սայաթ-Նովա փ33, հեռ 010-350303 |
| 11 | <Տոնուս -Լես>ՍՊԸ | Ք.Երևան, Վարշավյան 2/1, հեռ-060-480075 |
| 12 | <Հերմինե Ֆարմեց>ՍՊԸ | Ք.Երևան, Ավ.Ավետիսյան 76բն 17,հեռ 043-170864 |
| 13 | <Թեոֆարմա>ՍՊԸ | Ք.Երևան, Շերամի 92/3,հեռ-010-720880 |
| 14 | <Վագա-ֆարմ>ՍՊԸ | Ք.Երևան, Ֆիզկուլտուրնիկների 8 հեռ 010-739930 |
| 15 | <Դելտա Դեգա Ֆարմ>ՍՊԸ | Ք.Երևան, Դավիթաժեն 1թաղ, 26շբն35,հեռ-010 369086 |

**Ընդունվելէորոշում՝կողմ - 3,դեմ– 0**

2.3 <ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4 > ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած և որպես հնարավոր մասնակից գրանցված մյուս կազմակերպությունների կողմից գնային առաջարկի ծրարներ չեն ստացվել:

2.4 Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

2.5 Մասնակիցների գնային առաջարկներում պահանջվող փաստաթղթերը առկա են և կազմված հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0:**

**2.6 Մասնակիցների ներկայացրած գները հետևյալն են՝ հավելված 1**

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0:**

3.Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի <ԱԲԿ-ԾՀԱՊՁԲ-15/4-17/1> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարել 65,73,94,110,111,119,127,213 չափաբաժինների մասով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0:**

4 .<ԱԲԿ-ԾՀԱՊՁԲ-15/4-17/1> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5 կետի 1-ին մասի համաձայն 1-ին տեղ զբաված մասնակիցների մասով ներկայացնել հարցում՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված <ֆինանսական միջոցներ> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0:**

5. 23,26,32,71,107,149, չափաբաժինների հավասար գների համար առաջարկվել է բանակցել գների նվազեցման միջոցով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0:**

6 Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը և որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու հաջորդ օրը, ժամը՝ 11.00-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3,դեմ– 0:**

7. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամներ՝

Հանձնաժողովի նախագահ՝ /Մ.Հովակիմյան/
Անդամներ՝ /Լ.Ավետիսյան/
Ռ.Բենյամինյան/
Քարտուղար՝ / Գ.Ղազարյան/

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ կառավարության 10. 02.2011թ թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման>կարգի 11-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված սահմանափակման բացակայության մասին**

Ք.Արտաշատ 23.01 2017թ

<Արտաշատի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հովակիմյանս, անդամներ՝ Լ.Ավետիսյանս և Ռ.Բենյամինյանս հայտարարում ենք, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման>կարգի 11-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ մեր մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք և այդ անձանց կողմից հիմնադրած կամ բաժնեմաս ունեցող կազմակերպությունները չեն հանդիսանում ՓԲԸ-ի կարիքների համար <Դեղորայքի և պատվաստանյութերի ձեռք բերման >գնման գործընթացի հնարավոր մասնակից:

Հանձնաժողովի նախագահ՝ /Մ.Հովակիմյան/

Անդամներ՝ /Լ.Ավետիսյան/

/Ռ.Բենյամինյան/

Քարտուղար՝ / Գ.Ղազարյան/